

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏԱՍՆԸՄԷԿԵՐՈՐՍ ՆԻՍՏ

Նախագահ՝ Ա. Սախակեան

Օրակարգի հարցերն են. ա) Բժշկա-առողջապահական յանձնա-
ժողովի շաբաթական ղեկուցումը. բ) Պարենաւորման յանձնաժողո-
վի շաբաթական ղեկուցումը. գ) Գաղթականական յանձնաժողովի
շաբաթական ղեկուցումը. դ) Դպրոցական յանձնաժողովի օրինագի-
ծը դպրոցական վարչութեան կազմակերպութեան մասին. ե) Ըն-
թացիկ հարցեր:

Նախագահը յայտարարում է, թէ ստացել է յատուկ զօրական
յանձնաժողովի մասին մի օրինագիծ, որ յանձնւում է օրէնսդրական
յանձնաժողովին:

Բժշկա-առողջապահական յանձնաժողովի կողմից ղեկուցում է
տալիս բժ. Յ. Տէր-Միքայէլեանը, որ մանրամասնօրէն, վիճակագր-
րական տւեալներով ցոյց է տալիս քուլերայի տարածման չափը: Նրա
բերած թւերից երեւում է, որ վերջին ժամանակներս քուլերան սկսել
է պակասել: Նա նկատում է, որ այս գործին թէ բժիշկները, բու-
ժակները եւ թէ յատկապէս մտաւորականութիւնը աջակցութիւն ցոյց
չի տալիս եւ նոյն իսկ խուսափում է: Առաջարկում է բժշկական ու-
ժերի զօրակոչ յայտարարել: Շեշտում է նոյնպէս, որ դեղեր չկան,
մի հանգամանք, որ նոյնպէս նպաստում է պայքարի թուլութեան
քուլերայի դէմ:

Զեկուցման առթիւ տեղի է ունենում վիճաբանութիւն:

Ս. Մալխասեան. Ընդունելով ղեկուցման ընդհանուր հիմունք-
ները եւ երկրի ծանր վիճակը՝ առաջարկում է կտրուկ միջոցներ
ձեռք առնել քուլերայի դէմ մաքառելու համար. անհրաժեշտ է դըտ-
նում, որ ներքին գործոց նախարարը ունենայ յատուկ այդ հարցով
զբաղուող մի օգնական:

ԲԺ. Յ. ՏԵՐ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆ. Պատասխանելով պատգամաւոր Ս. Տիգրանեանի հարցերին՝ յայտնում է, որ յանձնաժողովը նիստեր է ունեցել, չըջադայել է քաղաքը եւ դաւառի մի մասը եւ այն տպաւորութիւնն է ստացել, որ կանոնաւոր միջոցներ ձեռք չեն առնւած. օրինակ, Էջմիածնի անմաքրութիւնը, որքանոցի երեխաների մեծ մահացութիւնը, Երեւան քաղաքը մաքրելու անյաջող փորձը: Վերջերս, սակայն, նոր բժիշկներ, բուժակներ եւ դիւթեան քոյրեր են ուղարկւած կառավարութեան կողմից: Նկատելի է նաեւ այն դժբախտ հանգանաքը, որ թէ բժշկական կազմը եւ թէ մտաւորականութիւնը այս պայքարին չեն մասնակցում եւ նոյն իսկ խուսափում են: Հարկաւոր է այս մասին լուրջ հոգ տանել:

Խարամնդարեան. Յիշելով մեր մտաւորականութեան եւ մասնաւորապէս բժիշկների յանցաւոր վերաբերմունքը նաեւ այս դէպքում, առաջարկում է բժիշկների զօրաշարժ կատարել եւ այդպիսով փրկել դրութիւնը: Ապա շեշտում է այն հանգամանքը, որ նման համաճարակների դէմ կռուելու համար իր ժամանակին նախապատրաստական աշխատանքներ չեն կատարւած. օրինակ, Թիֆլիսից չեն բերւել ներարկման զանազան հեղուկներ, կամ չեն պատրաստւել այստեղ:

Ս. Թորոսեան. Այստեղ հարցերը սխալ հասցէով են ուղղւում. գործնական պատասխաններ ստանալու համար պէտք է դիմել կառավարութեան եւ ոչ յանձնաժողովին: Պէտք է դիմել կտրուկ միջոցների, չսպասել կառավարութեան օրինազօրին, եւ յանձնարարել մեր յանձնաժողովին, որ մի օրւայ ընթացքում կարեւոր հարցերի կարգաւորումը բերի Խորհրդի նիստին:

Դ. Զուրեան. Զեկուցումից ծանր տպաւորութիւն եմ ստանում: Կառավարութիւնն իր իրաւունքներն է մտածում լայնացնել եւ իր խոստացած օրինազօրեւր չի ներկայացնում: Առաջարկում է բժշկաառողջապահական յանձնաժողովին տալ արտակարգ լիազօրութիւններ՝ քոլերայի դէմ կռուելու համար:

Հ. Ագաւեան. Երեւանում քաղաքային ինքնավարութիւն գոյութիւն չունի եւ գործ չի կատարում: Պէտք է նոր ընտրութիւն անել: Ներքին գործերի համապատասխան մինիստրութիւն չունենք. նախարարը 20 օր է խոստացել է օրինագիծ առաջադրել մեզ քոլերայի դէմ կռուելու համար եւ մինչեւ այժմ չէ արել. նա կրթւած է ստրաժնիկի եւ Ֆէլդֆէրէլի հոգով: Եւ ես ասում եմ, թո՛ղ կորչի այդպիսի մինիստրը: Այստեղ, այս նիստին պէտք է կամ նախարարը ներկայ լինէր կամ նրա ներկայացուցիչը: Պարենաւորման գործի պաշտօնեաները բիւրոկրատներ, ֆորմալիստներ են, որովհետեւ թոյլ

չեն տալիս հաց բերել-վարիչը չպէտք է վստահանայ միայն իր ուժերի վրա, որովհետեւ որքան էլ նա հերոսական ջանքեր թափի, ի դուր է. նա պէտք է դիմի ժողովրդի օգնութեան: Քաղաքը պէտք է բաժանել մասերի. միլիցիան պիտի աշխատի, նրա թիւը շատ է, բայց գործ չի անում:

Յ. Բալդադեան.- Դեռ եւս կառավարութեան պատասխանն ու բացատրութիւնները չէք լսել, հետեւապէս դեռ վաղաժամ են անարդարացի յարձակումներն ու քննադատութիւնները:

Յայտարարում է ընդմիջում:

Ընդմիջումից յետոյ ֆինանսների նախարար Խ. Կարմիկեանը պատգ. Հ. Ազատեանին պատասխանելով՝ ասում է. «Այսօր այս ամբիոնից յայտարարել են՝ «կորչի մինիստրը». թող բոլորն իմանան, որ կառավարութեան մէկ անդամի գործունէութեան համար պատասխանատու է ամբողջ կազմը: Այստեղ քննում են նախարարի հոգեկան եւ դաստիարակչական անձնական կողմը, որ անվայել է թէ ամբիոնի եւ թէ անողի համար. այս քայլը պատիւ չի բերում այս հիմնարկութեան եւ անողին: Թերեւս այդ ձեւի քննադատութիւնը դուր է գալիս անողին եւ նախագահութիւնն էլ իր կողմից թոյլ է տալիս եւ կարգի չի հրաւիրում. գուցէ այդ էլ իր պատճառն ունի, սակայն այդ ձեւի յայտարարութիւնը կառավարութեան չի ստիպում վստահութեան քէլի հարց դնել: Բժշկա-առողջապահական յանձնաժողովը կարող է զեկուցանել միայն իր արածի մասին և ոչ կառավարութեան: Մենք մինչև այժմ չենք խուսափել ձեր հարցերին պատասխանելուց, այսօր էլ նախ դուք պէտք է լսէիք կառավարութեան բացատրութիւնները, ապա ձեր վերաբերմունքը ցոյց տայիք:

Ա. Մելիքեան.- Ընդունում է, որ անտեղի վիճարանութիւններ տեղի ունեցան եւ ստացան սուր բնոյթ: Այս գրութիւնից դուրս գալու համար առաջարկում է հետեւեալ բանաձեւը, որ անցնում է 20 ձայնով մէկի դէմ.- «Լսելով բժշկա-առողջապահական յանձնաժողովի գեկուցումը քաղաքայի մասին եւ տեղի ունեցած վիճարանութիւնները՝ Խորհուրդը հրաւիրում է կառավարութեան ներկայացուցիչին՝ գեկուցանել հետեւեալ նիստում իր գործունէութեան մասին համաճարակի դէմ եւ կազմած օրինագծի մասին քաղաքայի դէմ պայքարելու հարցի վերաբերեալ»:

Ապա պարենաւորման հարցի մասին զեկուցանում է պատգ. Ա. Մելիքեանը:

Հ. Ագաւտեան.- Տալիս է անձնական բացատրութիւն, որ նախա-

րարին Ֆէլդֆէլէլ ասելիս՝ նրա գործունէութեան սխատեմն է նկատի ունեցել եւ ոչ անձը:

Հ. Սարգսեան.- Կարծում է, որ կիսամիջոցներով երկիրը սովից Վերկել չի կարելի, այլ պէտք է աշխատել բանալ ճանապարհները եւ Ռուսաստանից ու Ղրսից հաց ներմուծել:

Հ. Ազատեան.- Հացը գողացւում է գող չինովնիկութեան կողմից. մենք չունենք պատասխանատու կառավարութիւն. ե՞րբ պէտք է վերջինս գործը իր ձեռքն առնի: Ե՞րբ պէտք է զօրական նախարարը պատժի գող ինտենդատներին եւ վերջ տայ բաշխողութեան: Ձեմ հաւատում, թէ կառավարութիւնը ամբարներում հաց ունենայ:

Ս. Տէր-Մարտիրոսեան.- Յայտնում է, որ քաղաքը երկու ամսւոյ հաց ունի եւ մտադիր է մեծ քանակութեամբ գետնախնձոր ձեռք բերել հացի հետ խառնելու համար: Եթէ յաջողւի, քաղաքը իննը ամսով կապահովւի: Հացի մենավաճառը պէտք է վերացնել եւ թոյլ տալ ազատ առեւտուր:

Խնդրի քննութիւնը յետաձգւում է յաջորդ նիստին, որ նշանակւում է կիրակի օր: Ապա ընտրւում են զօրական յանձնաժողովի հետեւեալ անդամները, ոչ Փրակցիական, այլ անձնական սկզբունքով.- Աբրահամ Մալխասեան, Ռուբէն Տէր-Մինասեան, Դրօ, Գազա Տէր-Օհանեան, Գր. Տէր-Պաշտրեան:

«Հորիզոն», 24 սեպտ.

ՏԱՍԵՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԻՍ

Նախագահ՝ Ա. Սահակեան

Օրակարգը.- 1) Դպրոցական յանձնաժողովի մշակած օրինագծի երկրորդ եւ երրորդ ընթեցումը. 2) Պարենաւորման յանձնաժողովի ղեկուցման քննութիւնը. 3) Կառավարական բացատրութիւնները բըժըշկա-առողջապահական, գաղթականական եւ պարենաւորման գործերի մասին. 4) Պատգամաւորների օրապահիկի օրինագծի երրորդ ընթերցումը. 5) Ընթացիկ հարցեր:

Դ. Զուրեան.- Յայտարարում է, որ սոց.-յեղափոխականների Փրակցիան համաձայն է դպրոցական օրինագծի գլխաւոր հիմունքներին: Մենք եւս ընդունում ենք, որ այսպիսի ժամանակում ամէն կերպ պէտք է խուսափել դպրոցական գործի մէջ յեղաշրջումներ մտցնելուց: Սակայն, կան մի քանի կէտեր, որոնց դէմ մենք անհրաժեշտ ենք համարում յայտնել մեր տեսակէտը: Յանկալի է, որ

դպրոցը ազատ լինի քաղաքականութիւնից, բայց այդ հնարաւոր չէ, որովհետեւ իւրաքանչիւր երկրում գոյութիւն ունեն զանազան դասակարգեր և դասակարգային կռիւներ, եւ այն դասակարգը, որի ձեռքին գտնուում է քաղաքական ղեկը, իր քաղաքականութիւնն էլ, բնականաբար, պիտի տարածէ բոլոր երեւոյթներէ վրա: Եթէ դըւրոցական գործի կենտրոնական վարիչը պէտք է ընտրուի պարլամենտից, նայած թէ պարլամենտում որ դասակարգի ներկայացուցիչները գերակշռող թիւ են կազմում, այդ դասակարգի քաղաքականութիւնն էլ ինքն ըստ ինքեան կանգնադառնայ դպրոցական գործերի վրա:

Երկրորդ՝ ի նկատի ունենալով, որ կենտրոնական դպրոցական վարչութիւնը առաջժամ մանկավարժական եւ տնտեսական խնդիրներով չի զբաղւելու, սոց. - յեղափոխականների Փրակցիան գործնական յաջողութեան տեսակէտից յարմար է գտնում, որ կենտրոնական վարչութիւնը լինի միանձնեայ:

Պէտք է աչքաթող չանել նաեւ այն հանգամանքը, որ մեզնում մանկավարժների թիւը պակաս է, ուրեմն, եւ դրանց չպէտք է մըտցնել զանազան վարչութիւնների մէջ. եւ երրորդ՝ որ պետական գանձարանը աղքատ է եւ հնարաւորութիւն չի ունենայ բազմանձնեայ վարչութիւն սկսել, որի իւրաքանչիւր անդամը պետութիւնից ոռճիկ ստանայ:

Պատգ. Զուբեանը առարկում է օրինագծի Գրդ յօդւածի դէմ, ըստ որի, եթէ հոգեւորականները իրենց տրամադրութեան տակ գտնող դպրոցները պետութեան չյանձնեն, պետութիւնը չպէտք է հարկադրանքի դիմի: Ուրեմն, այդ դպրոցները փակ կը մնան: Միւս կողմից, պետութիւնն էլ հնարաւորութիւն չի ունենայ դրանց տեղը նոր դպրոցներ բանալու, նախ՝ որովհետեւ յարմար չէնքեր չկան, երկրորդ՝ որովհետեւ դժւար է սարքաւորում ձարել: Դրա համար սոց. - յեղափ. Փրակցիան օրինագծի Գրդ յօդւածին առաջարկում է կցել հետեւեալ յաւելումը. «Այն դպրոցները, որոնք հոգեւորականութեան կողմից չեն յանձնւի պետութեանը, վերջինս իրաւունք ունի այդ դպրոցը իր կամքով զրաւելու: Իսկ եթէ հոգեւորականութիւնը ցանկանայ սեփական դպրոցներ ունենալ, միջոցների մասին պարտաւոր է ինքը հոգ տանել:»

Ի վերջոյ, Զուբեանը յայտնում է այն տեսակէտը, որ դպրոցների հոգաբարձութիւնը պէտք է ընտրուի ոչ թէ կենտրոնական վարչութեան, այլ Ժողովրդի կողմից:

Ա. Մխիթարեան. Հայ Ժողովրդ. Կուսակցութեան կողմից յայտարարում է, որ իրենք դէմ են օրինագծի Տրդ յօդւածին, որով

դպրոցական ամբողջ դործը անջատում են կառավարութիւնից եւ դնում Խորհրդի արամադրութեան տակ՝ հիմք ընդունելով, որ կառավարութիւնը կարող է փոփոխել, իսկ դպրոցը պէտք է աղատ լինի փոփոխութիւնից: Այդ սխալ է, որովհետեւ եթէ դպրոցական դործը յանձնում է Խորհրդին, նա պէտք է ընթացք ստանայ Խորհրդի մեծամասնութեան հայեցողութեան համաձայն եւ թէ մի օր երբ այդ մեծամասնութիւնը փոփոխւի, բնականաբար, փոփոխման կենթարկւի նաեւ դրանց ենթակայ դպրոցը: Երկրորդ՝ դպրոցը յանձնելով պարբերաբար հայեցողութեան - շփոթութիւն ենք մտցնում դործադիր եւ օրէնսդիր մարմինների Փոփոխութիւնների մէջ, որի հետեւանքով Խորհուրդը կը դառնայ դործադիր մարմին:

Այնուհետեւ Մխիթարեանը հարց է տալիս՝ եթէ դպրոցական դործը անջատում ենք կառավարութիւնից, ապա ինչո՞ւ զօրական եւ պարենաւորման դործերը նոյնպէս չենք դատում:

Պատգ. Մխիթարեանը արտայայտւում է նաեւ օրինագծի վեցերորդ յօդաձի դէմ եւ գտնում է, որ ներկայ պարագաներում բոլորովին անհնար է դպրոցների տնտեսականը թողնել համայնքների հայեցողութեան: Վերջինիս տգիտութեան պատճառով շատ դպրոցներ կը փակւեն, որ ցանկալի չէ: Որպէսզի ցոյց տայ պետութեան հողացողութեան եւ նշանակութեան կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը, օրինակ է բերում, թէ ինչպէս Վրոնցով-Դաշկովի ժամանակ ռուսաց պետական դպրոցները առաւելութիւն ստացան ի դիմաց հայկական դպրոցների: Ի վերջոյ, առաջարկում է դպրոցական դործը ամբողջովին յանձնել կառավարութեան:

Հ. Ագապեան. - Եւտում է, որ դպրոցական դործի վարչութիւնը անպայման պէտք է կառավարութեան մէջ գտնւի եւ որպէսզի աւելորդ ծախքեր չլինեն, առաջարկում է դպրոցական վարչութիւնը արդարադատութեան մինիստրութեան ենթակայ դարձնել: Երկրորդ՝ դպրոցները անմիջապէս պէտք է ենթարկւեն տեղական ինքնավարութեան մարմիններին, հակառակ դէպքում պէտք է ստեղծել մի նոր մարմին, որի համար նոյնպէս բաւական ծախքեր են հարկաւոր: Երրորդ՝ ի նկատի ունենալով, որ պետութիւնը եկեղեցուց բաժանւած է, ուստի կառավարութիւնը ոչ մի կոպէկ չի տրամադրում կրթոնի դասաւանդութեան համար:

Ի. Զորին. - Նկատում է, որ օրինագծի ամենաբխաւոր կէտը վարչութեան միանձնեայ եւ կոլեգիալ լինելու մէջ է, եւ չեւտում է, որ վարչութիւնը պէտք է կոլեգիալ լինի՝ հետեւեալ հիմունքներով. Նախ՝ որ դպրոցական օրինագծի մշակման դէպքում կոլեգիալ մարմինը աւելի բանական եւ դործնական որոշումներ կանէ քան միանձ-

նեայ վարչութիւնը: Երկրորդ եւ ամենագլխաւորը՝ եթէ այդ մարմինը լինի միանձնեայ, ժողովրդի, եւ մանաւանդ, փոքր ազգերի վստահութիւնը չի վայելի:

Ս. Տիգրանեան, ղեկուցանող.- Օրինադժի հիմնական կէտերի դէմ եղած առարկութիւնները երեք խնդրի շուրջն են հաւաքուում. նախ՝ դպրոցը պետութիւնից բաժանելու խնդիրը: Պէտք է աչքի առաջ ունենալ, որ այս սկզբունքը օրինադժուում լիովին կիրառւած չէ. օրինակ, դպրոցական վարչութիւնը ենթարկւած է Խորհրդարանին, բայց այդ մի ժամանակաւոր շեղումն է ընդունւած սկզբունքից եւ պատճառը մեր երկրի ներկայ խառնակ պայմաններն են. իսկ առաջիկայում, երբ հնարաւոր կը լինի կազմակերպել թէ ստորին եւ թէ վերին յատուկ դպրոցավարիչ մարմիններ հասարակական ընտրական հիմունքներով, այն ժամանակ այլեւս պարլամենտից էլ կադատադրւի դպրոցը:

Ժողովրդական սկզբունքներով կազմակերպւած հոգաբարձութիւնները մենք պահում ենք, իսկ որպէս վերին օրգան առ այժմ ընդունում ենք Խորհրդարանը, որպէս միակ բարձր ժողովրդական ներկայացուցչութիւն: Ճիշտ է նկատւած, որ քանի դոյուլթիւն ունեն տարրեր դասակարգեր, դասակարգային պայքար, դպրոցն էլ անկարող է ազատ մնալ այդ պայքարից, հետեւապէս եւ քաղաքականութեան ազդեցութիւնից, բայց սրանով չի հերքուում դպրոցի ապաքաղաքականացման ցանկալիութիւնը եւ նպատակայարմարութիւնը. իսպառ ազատել դպրոցը քաղաքականութեան ունէ ազդեցութիւնից անհնար է, բայց այդ ազդեցութեան չափը կարելի է մեղմել. եւ ահա այս նպատակին հասած կը լինենք, եթէ դպրոցական վարչութիւնը չմտցնենք այն հաստատութիւնների մէջ, որոնք գերազանցապէս կոչւած են քաղաքականութեան եւ քաղաքական պայքարի ասպարէզ լինելու, եւ յանձնենք այնպիսի մարմինների, որոնք յատկապէս դպրոցները վարելու համար են ընտրւած եւ որչափ կարելի է հեռու են մնալու այդ պայքարից եւ պետական քաղաքականութեանը մասնակցելուց: Քանի որ դպրոցը ենթարկւելու է Խորհրդարանին (ինչպէս բացատրեցի, միայն ժամանակաւորապէս), ի հարկէ, նա ենթակայ է լինելու սրա մեծամասնութեան եւ մեծամասնութեան կրեւիք փոփոխութիւններին. բայց չմոռնանք, որ այս փոփոխութիւնները շատ անգամ այնպիսի պատահական եւ թեթեւ հանգամանքներից կախւած չեն, ինչպէս մինիստրական կազմի փոփոխութիւնները: Խորհրդարանից ընտրելով բարձր դպրոցական մարմինը՝ բնաւ օրէնադիր եւ գործադիր-կառավարչական Փունկցիաների չփոթումն չենք առաջացնում. այդ տեղի կուենայ, եթէ, օրինակ,

մեր դպրոցական յանձնաժողովին կառավարչական իրաւունքներ տալինք, որ, ի հարկէ, մերժելի է. իսկ գլխաւոր դպրոցական մարմինը, եթէ ընտրւելով Խորհրդարանից՝ զատի սրանից, ստանայ իրաւասութեան իր սեփական բաժինը եւ անկախ գործունէութեան շրջանը, մնալով պատասխանատու պարլամենտի առաջ, չփոթումն չի լինի: Չէ՞ որ ամբողջ կառավարութիւնը նոյնպէս ընտրւած է Խորհրդարանից եւ պատասխանատու է սրա առաջ. մի՞թէ դրանից չըփոթումն է առաջանում օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնների միջեւ:

Հարց են տալիս, թէ ապա ինչո՞ւ միւս մինիստրութիւնները չեն զատուելու կառավարական կազմից եւ կազմակերպւելու առանձին կերպով, օրինակ՝ զօրականը, արդարադատութեանը: Ժողովուրդի լուսաւորութեան գործը, ինչպէս բացատրւեց անցեալ նիստում, պէտք է եւ կարելի է զատել մինիստրական կառավարութիւնից. դպրոցական գործի բնոյթը այնպէս է, որ դրանից չեն տուժի ոչ կառավարութեան, ոչ էլ ժողովրդի կրթական շահերը, այլ՝ ընդհակառակը:

Զօրքն էլ, ճիշտ է, պէտք է քաղաքականութիւնից զատւած լինի, բայց զօրքի կեանքն ու պէտքերը այնպէս են, որ առանձնացնել ընդհանուր կառավարութեան ապարատից եւ մեխանիզմից անհնար է. զօրքի տնտեսութիւնը անհամեմատ աւելի բարդ եւ բազմակողմանի է, քան դպրոցինը, անթիւ եւ կարելորդ կապերով հիւսւած է պետութեան տնտեսական եւ ֆինանսական կարգերի եւ օրգանիզմի հետ. չկայ պետական կառավարութեան գրեթէ ոչ մի ճիւղ, որի այս կամ այն ընթացքն եւ ուղղութիւնը կարելորդ, շատ անգամ վրձնական չլինէր զօրքի կեանքի եւ գործունէութեան վիճակի վրա (օրինակ, ոստիկանութիւնը, միլիցիան, ճանապարհների եւ փոստ-հեռագրային հաղորդակցութիւնը, պարենաւորման գործը եւ այլն):

Եթէ փորձ անէինք առանձնացնելու զօրքի վարչութիւնը կառավարութիւնից, այդ չէր յաջողւի, որովհետեւ միեւնոյնն է, այդ վարչութիւնը շարունակ յարաբերութեան եւ բանակցութեան մէջ պիտի լինէր, հազար տեսակ շփում եւ առնչութիւն պիտի ունենար թէ ներքին, թէ արտաքին, թէ ֆինանսական, թէ ճանապարհների եւ թէ այլ կառավարական վարչութիւնների հետ: Զօրքը պէտք է քաղաքականութիւնից հեռու մնայ, բայց զօրքի գործի վիճակը պէտք է աչքի առաջ ունեցւի իւրաքանչիւր քաղաքական խնդիր լուծելիս, ինչպէս ինքը զօրական գործը պէտք է համակերպ ընթանայ պետական քաղաքականութեան տրւելիք նպատակներին:

Ուրեմն, զօրքի կոչումն ու դերը այնպէս են, որ զօրքի վարչու-

Թիւնը անխզելի եւ սերտ կապերով շաղկապւած պիտի ընթանայ պետութեան ընդհանուր կառավարութեան հետ: Այսպիսի շաղկապ դոյութիւն չունի դպրոցի նկատմամբ սրա կոչման եւ բնութեան պատճառով: Միակ չիօթը, որ դպրոցը կարող է ունենալ պետութեան հետ, այդ զանձարանից նպաստ ստանալն է, որ շատ յաջողակ կերպով կարող է կատարել նաեւ պարլամենտի միջնորդութեամբ եւ յամենայն դէպս, մշտական յարաբերութիւնների կարօտ է՝ կառավարութեան հետ: Ձէ կարելի մի ընդհանուր որոշում տալ այս խնդրում վարչական բոլոր ճիւղերի եւ շրջանների նկատմամբ, այլ իւրաքանչիւրը պէտք է ենթարկել առանձին քննութեան: Օրինակ, անցեալները խորհրդարանը վճռեց դատել կառավարութիւնից պետական հաշւետեսութեան (կոնտրոլ) կազմակերպումը: Եւ ենթարկել անմիջապէս իրեն. այդպէս վճռեց, որովհետեւ այդ էր պահանջում գործի էութիւնն ու շահը:

Այսօր ձեզ առաջարկում է դատել կառավարութիւնից դպրոցական գործը՝ ժամանակաւորապէս պարլամենտին ենթարկելով, իսկ առաջիկայում բոլորովին պետութիւնից դատելու է եւ յանձնելու յատուկ դպրոցավար համայնական կազմակերպութիւնների, որովհետեւ այդպէս է պահանջում ժողովրդական կրթութեան եւ ուսումնարանի շահը: Մօտերս թերեւս նմանօրինակ առաջարկ լինի խորհրդարանից նաեւ արդարադատութեան նկատմամբ: Իսկ մի շարք գործեր բնականօրէն կը մնան ընդհանուր միջխտրական կառավարութեան իրաւասութեան եւ գործունէութեան շրջանակում, որպէս անհրաժեշտ եւ անրաժան մասեր:

Մեր միջավայրը յիշաւի յետամնաց է, բայց կան յառաջադէմ կարգեր, որոնք իրենց պարզութեամբ եւ նպատակայարմարութեամբ թերեւս աւելի կիրառելի են նոյնիսկ յետամնաց երկրներում, քան պակաս յառաջադէմ հաստատութիւնները: Իսկ յատկապէս ներկայ խնդրի համար կասեմ, որ դպրոցը պետութիւնից եւ պետական կառավարութիւնից անջատելու սխտեմը հէնց մեր հայոց ազգային դպրոցների աւանդական կարգն է, որին մենք աւելի ենք սովոր եւ ընտելացած, քան պետական դպրոցի սխտեմին: Մնում է որ օգտուելով մեր առաջ բացւած աղատութիւնից անկաշկանդ զարգացնէինք եւ բարւոքէինք այն առողջ ժողովրդական սաղմերը, որ մեր ազգային կեանքն ու բնոյթը դրել են մեր սեփական դպրոցական գործի մէջ. մեր սեփական դպրոցական գործունէութեան փորձը շատ տարիներից ի վեր մեր առաջ երկու հերթական բարեփոխման եւ կարիքի հարց էր դրել, մեր դպրոցը կարօտ էր աւելի բարձր կարգի, քան ծխական հոգաբարձութիւններն էին, հասարակական ընտրովի մար-

միջոցները եւ աւելի հաստատուն եւ բաւարար նիւթական միջոցների մեր հասարակաց կարծիքը արդէն մշակել էր նաեւ այն եղանակները եւ ձեռնարկութիւնները, որոնցով այդ կարիքները կարող էին եւ պէտք է բաւարարւէին (թեմական, շրջանային եւ կենտրոնական խորհուրդներ, դպրոցական պարտադիր տուրք), ուսաց յետամնաց կառավարութիւնն էր, որ հալածում եւ ճնշում էր մեր այդ ուղղութեամբ կատարուող ջանքերը, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը թող ազատ հնարաւորութիւն տայ դպրոցին, այդ ուղղութեամբ յառաջդիմելու եւ բարդաւածելու:

Դպրոցական բարձր օրգանը միանձնեայ կամ բազմանձնեայ կազմակերպելու խնդրի առիթով յայտնած կարծիքների մասին առանձին բան չունիմ ասելու: Իսկ երրորդ խնդրի շուրջը, մեր հայկական եկեղեցական դպրոցները հարկադրաբար պետութեան ենթարկելու կարծիքի նկատմամբ կը յիշեցնեմ, որ այդ հակասում է դպրոցների բացման եւ պահպանման ազատութեան սկզբունքին, որը արձանագրւած է յանձնաժողովի 7-րդ առաջնորդիչ սկզբունքում եւ որի դէմ ոչ մի Փրակցիա այստեղ չառարկեց: Կարծում եմ, որ կարիք էլ չի լինի հարկադրական միջոցների դիմելու, քանի որ թէ ծխական հոգաբարձութիւնները, թէ հոգեւոր իշխանութիւնը յօժարաւ կամ ընդառաջ կը դան խորհրդարանի այս քայլին՝ իրենց ջէնքերն ու դպրոցական կահաւորումը տրամադրելի կը դարձնեն եւ պետական դանձարանի նպաստն ստանալով՝ կը բացեն դպրոցները հայ աշակերտութեան համար: Մենք լիակատար իրաւունք ունենք կատարելապէս ժողովրդավար եւ աշխարհիկ դպրոց դարձնել մեր ծխական ուսումնարանները, առանց այժմ եւ եթ կ'նճոտ եւ նուրբ հարցեր յարուցանելու եւ անցողաբար լուծելու:

Դպրոցների ազգայնացման անհրաժեշտութիւնը յանձնաժողովն աչքի առաջ ունեցել է, բայց այս ժամանակաւոր կարգադրութեան մէջ առանձին չէ դրադուում դրանով: Մենք ի նկատի ունէինք նախ՝ որ ազգայնացման գործը դեռ անցեալ տարւանից Անդրկովկասեան ուսումնական կոմիտայի կարգադրութիւններով սկսել է իրագործւել եւ շարունակելու էլ է, իսկ այժմ կազմակերպւելիք ժամանակաւոր դպրոցավար մարմիններից հոգաբարձութիւնները արդէն ազգային կերպարանք ունեն (հայ հոգաբարձութիւն՝ հայ դպրոցին, թուրք հոգաբարձութիւն՝ թուրք եւ ուս հոգաբարձութիւն՝ ուս դպրոցի համար), իսկ գլխաւոր կենտրոնական կոմիտէի մէջ մասնակցելու են թուրք եւ ուս ազգային խորհուրդների ներկայացուցիչները: Դպրոցների ազգայնացման խնդիրը իր բազմակողմանի եւ լիակատար ձեւակերպումն ու կազմակերպումը կը ստանայ յա-

ռաջիկայում, երբ խորհրդարանը կը զբաղւի եւ կը մշակի ազգային հանրային դպրոցների կառավարութեան եւ կազմակերպութեան իրաւական կարգերն ու կանոնները: Իսկ այսօր յանձնաժողովը մտահոգւած է մի նպատակով՝ շուտով, օր առաջ ստեղծել մի բարձր դպրոցավար մարմին, որն անմիջապէս ձեռնարկէր եւ հոգար կեանքի եւ աշխատանքի կոչելու մեր երկրում գոյութիւն ունեցող դըպրոցները:

Նախագահը օրինադժի ընդհանուր հիմունքների քննութիւնը համարում է սպառած եւ առաջարկում է անցնել յօդւած առ յօդւած օրինադժի քննութեան:

Հ. Ազատեան.- Արտակարգ կերպով յայտարարում է, որ իր նախկին ճառը սխալ են ըմբռնել: Նա չի ասել, թէ յանցաւոր զինուորին չի կարելի պատժել եւ որ զօրքը իր սպաների հետ in corpore դող է: Նա միայն մեղադրել է անհատներին: Աւելացնում է, որ իրենց Ֆրակցիան զօրքի մասին բարձր կարծիք ունի:

Նախագահը իր կողմից յայտնում է, որ պատգ. Ազատեանի խօսքը անհատներին է վերաբերել եւ ոչ զօրքին ընդհանրապէս:

Յ. Բուդաղեան.- Նկատի ունենալով, որ դպրոցական հարցը այսօր չի կարող վերջանալ, առաջարկում է յետաձգել միւս նիստին եւ անցնել օրակարգի միւս հարցին: Այս առաջարկը ընդունւում է:

Ա. Մելիքեան.- Պարենաւորման հարցի շուրջը անցեալ անգամից մնացած մի քանի դիտողութիւններ կան, որ եւ ինքը անհրաժեշտ է դնում սպառել: Առաջին՝ արդեօ՞ք սով է սպառնում ապագայում. երկրորդ՝ երբ պարենաւորման յանձնաժողովը զեկուցանում է, նա պէտք է զինւած լինի թիւերով. երրորդ եւ ամենադժխաւորը՝ ըստ զեկուցման, պարենաւորման յանձնաժողովում մոնոպոլիայի նկատմամբ կտրուկ հայեացք չի եղել: Այդ խնդրի շուրջը երեք որոշում կարող է լինել. ա) հացահատիկները կենտրոնացնել պետութեան ձեռքում, բ) թոյլ տալ ազատ առեւտուր, եւ գ) թոյլ տալ ազատ առեւտուր պետութեան հսկողութեան ներքոյ: Երրորդ ճանապարհը միանգամայն կորստաբեր կը լինի մեզ համար. դրանում համոզելու համար պէտք է յիշել յեղափոխութիւնից առաջ Ռուսաստանի պարենաւորման միճակը: Իի՜չ վերաբերում է ազատ առեւտրին, սրա ժամանակ հարկաւոր է ունենալ նիւթ, ճանապարհ, որոնք բացակայում են մեզանում: Ազատ առեւտուրը մեր երկրում չարաշահութեան բնոյթ կը կրի, որի հետեւանքով մթերեքների գները դգալիօրէն կը բարձրանան: Հարուստները հնարաւորութիւն կ'ունենան հացահատիկ ձեռք բերելու, իսկ աղքատները սովից կը մեռնեն: Եւ, վերջապէս, այդ առեւտուրը երկրի մէջ եղած բոլոր նիւ-

Թերը մի անգամից կը սպառւի, որի հետեւանքը նորից սով կը լինի: Միայն կարելի է հաշուել պետական մոնոպոլիայի հետ, որի շնորհիւ կառավարութիւնը իր ձեռքի տակ կունենայ բաւական հացահատիկ եւ այնպէս կը բաշխի, որ դալիք սովի առաջն որոշ չափով կառնի:

Ս. Մալխասեան. Այն մարդիկ, որոնք պատմում են, թէ մեր երկրում նիւթ չկայ, սխալում են: Մեր երկրում նիւթ կայ: Առաջ մենք հացահատիկ ներմուծում էինք Հիւսիսային Կովկասից, հիմա այդ ցորենը չկայ, չկայ նաեւ ուսաց զօրքը. երկրորդ՝ դաղթականներն մի մասը իր հետ ցորեն է բերել. միւս կողմից, Հայաստանում տեղի է ունեցել արտագաղթ: Ահա այս բոլոր տեսանկյունով պէտք է, որ մեզանում հացահատիկը այն չափով չպակսի, ինչ չափով որ մենք ենք պատկերացնում: Խնդիրը նրանումն է, որ գիւղացիները թագցրել են եւ ազատ առեւտրի դէպքում նրանք երեւան կը հանեն իրենց հացահատիկները: Երրորդ՝ կարելի է հացի նորման պակասեցնել, դրա փոխարէն միւս տալ: Ի վերջոյ, շեշտում է, որ սովը մենք արհեստական կերպով ենք բերում:

Արամ, ներքին գործոց նախարար. Յայտնում է, որ այնքան էլ յուստես չպէտք է լինել պարենաւորման հարցի վերաբերմամբ: Ծրրջաններում դեռ շատ տեղ հունձը չէ սկսել, այնպէս որ ինքը 300000 փութ ցորեն է սպասում նոր ցանքսերից: Նկատում է, որ պարենաւորման թւերը լրիւ չեն, որովհետեւ շրջանների ամբարներում գրտնըւած հացահատիկների քանակը յայտնի չէ պարենաւորման կենտրոնական վարչութեան: Այնուհետեւ նախարարը յայտնում է, որ ինքը միանգամայն համաձայն է Ա. Մելիքեանի մոնոպոլիայի վերաբերմամբ առաջադրած տեսակէտին: Ապա շեշտում է, որ կառավարութիւնը ամէն միջոց ձեռք է առնում արտասահմանից հացահատիկ ձեռք բերելու համար:

Ա. Մելիքեան. Աղաջանեան. Ճիշտ է, մենք թւերով գինւած չենք եղել, որովհետեւ պարենաւորման գործը այնպէս է դասաւորւած, որ հնարաւորութիւն չի եղել աւելի թւեր քաղել: Մեր յանձնաժողովի նիստերում մոնոպոլիան եղել է կենտրոնական խնդիրներից մէկը եւ յանձնաժողովը կտրականապէս որոշել է պետական մոնոպոլիան պահպանել:

Այնուհետեւ պարենաւորման խնդրի առթիւ նախագահը քէարկութեան է դնում յանձնաժողովի առաջարկը, որ եւ անցնում է 25 ձայնով:

Յ. Տէր-Յակոբեան. Դանակցութեան ֆրակցիայի կողմից հարցում է անում կառավարութեան՝ արդեօք յայտնի՞ է, որ մի ոմն

Տէր-Մատթէոսեան, Փուրաքարի պետական ամբարից 2000 փութ-
ցորեն է վերցրել եւ եթէ այո՛, ի՞նչ միջոցներ է ձեռք առել ներքին
գործոց նախարարը:

Արամ, ներք. գործ. նախարար.- Յայտնում է, որ 2000 փ. ցո-
րենի համար քննութիւն է նշանակել: Ինչ վերաբերում է քոլերայի
դէմ օրինագիծ ներկայացնելուն, դրա համար ինքը կարգադրու-
թիւններ է արել. ա) Հայաստանի հանրապետութեան սահմաննե-
րում ապրող այն բնակիչները, որոնք չեն ենթարկւի բժշկա-առող-
ջապահական յանձնաժողովի կանոններին, կենթարկւեն 3 ամիս բան-
տարկութեան կամ 3000 ռ. տուգանքի. բ) գաւառներն ուղարկւել
են բժիշկներ եւ բուժակներ քոլերային դէմ մաքառելու համար:

Այնուհետեւ նախարարը անցնում է գաղթականների խնդրին եւ
յայտնում, որ նրանք ստանում են ցորեն: Բայց ամէն տեսակ զեղ-
ծումներից խուսափելու համար պէտք է գաղթականութիւնը տեղա-
ւորել, որի համար գաղթականական յանձնաժողովը մտածել է եւ
որոշել բնակեցնել շրջաններում:

Զօր. Հախվերդեան, զինւ. նախարար.- պատասխանելով սոց.-
դէմ. Փրակցիայի հարցապնդման՝ ասում է, թէ ինքն ընդհանրա-
պէս զինւորների ապօրինի գործունէութեան համար կարգադրու-
թիւններ է արել: Միաժամանակ շեշտում է, որ զինւորներն այնքան
էլ մեղաւոր չեն, որքան ենթադրւում է, որովհետեւ դասալիքներն
ու փախստականներն են այդ չարիքները հասցնողը:

Հ. Ագաւտեան.- Ի՞նչ միջոցներ են ձեռք առնւած էջմիածնի եւ
նրա շրջանների զինւորների եւ գերդացիների միջեւ եղած երկպա-
ռակութեան առթիւ:

Զօր. Հախվերդեան.- Երկու մարդ է ուղարկւած այդ գործերը
քննելու եւ համապատասխան կարգադրութիւններ անելու համար:

Յ. Զաքարեան.- Յայտնում է, որ ինքը բաւարարւած չէ զինւո-
րական նախարարի բացատրութիւններով: Այն գործը, որի համար
պէտք էր շտապ կարգադրութիւններ անել, դանդաղել է:

Հ. Սարգսեան.- Զինւորական նախարարը լսելով զինւորների
անկարգութիւնների մասին՝ պարտաւոր է անմիջապէս միջոցներ
ձեռք առնել նման դէպքեր չկրկնելու համար: Դրա համար բաւա-
կան չէ մարդիկ ուղարկել, այլ հարկաւոր է անձամբ դնալ քննու-
թիւն կատարելու եւ կարգադրելու:

Մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ, քննարկութեան է
դբւրում հետեւեալ առաջարկը.- «Լսելով զինւորական նախարարի բա-
ցատրութիւնները վաղարշապատում եւ այլ վայրերում զօրքերի կա-

տարած դեպքերի մասին՝ Խորհուրդն առաջարկում է կտրուկ և գործնական միջոցներ ձեռք առնել նման դեպքերը վերացնելու համար։»

Բանաձևերը ընդունվում է։

Նիստը փակվում է գիշերվայ ժամը 2 և կեսին։

«Հորիզոն», 26 սեպտ.

